բումով Արեւմուտքի քաղաքակրթութեան առաջապահն եղաւ եւ պահապանը եւ առաջնորդը՝ արիական ոգու եւ արիական ժողովուրդների՝ Փոքր Ասիայում: Հայաստանը, Արեւելքի այս փոքր Եւրոպան, մի տեսակ յառաջացած պահակը Արեւմուտքի, որ անակնկալ կերպով թողուեց իր բախտին այն ժամանակ, երբ նա ամենից աւելի օգնութեան պէտք ունէր: Մենաւոր ու հեռու ինկած պահապանը թողնել առանց փոխանակի, առանց օգնութեան, չորս կողմից արշաւող թշնամիների դէմ, դա նոր ժամանակների ոգու նշանն է եւ քաղաքակիրթ կոչուած պետութիւնների մեծագոյն ոճիրը:

Անիրաւութիւններ կան, որոնք իրենց մէջ կրում են զարհուրելի հատուցումի սաղմը: Հռոմ ու Բիւզանդիոն կործանեցին Հայաստանը, որպէսզի իրանք իրանց հերթին բարբարոսների կրունկների ծանրութիւնն զգան: Կը մնա՞յ արդեօք, առանց զարհուրելի հատուցումի՝ Հայաստանի դէմ կատարուած այս նորագոյն թշնամանքը եւ ոճիրը: Դա կ'ասի աշխարհի յետագայ պատմութիւնը: Առայժմ, ինչ որ մենք տեսնում ենք, դա վստահութեան եւ հաւատի մահն է՝ հանդէպ Եւրոպայի եւ Եւրոպացու: Արդէն իսկ ողջ Արեւելքը ցնցուել է. եւ միլիոններ են նրանք, որոնք ատամներ են կըճըտում եւ բռունցք են ցոյց տալիս քաղաքակրթուած աշխարհին: Ռուսական տափաստաններում բարձրացել է ահարկու Դէմոսը, որ աւերում է ու ոչնչացնում այն բոլորը՝ ինչի համար Դաշնակիցները իրը թէ այս անցեալ անհնարին պատերազմը ու նախճիրները կատարեցին: Բացուած է հսկայական խարդախութիւնը, այլեւս ոչ ոք չի խաբւում:

Հայաստանի արիւնը արդարութիւն է աղաղակում...

... Բայց ես նոր Հռոմումն եմ, Մարկոս Աւրելիոսի սիւնի տակ կանգնած, եւ իմ հայրենի աշխարհիս հի՛ն հին յուշերի մոխիրներն եմ խառնում՝ Armenia!, Armenia!, *դուն յաւէտ անմոռաց, դո՛ւն յաւէտ զոհուած եւ միշտ արդար, թո՛ղ որ ես վերստին հաւատամ քու բախտին:*

(Վերջ)

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԱՆՈՒՐՋԸ

Շողերուն դիմաց այգուն սա աղուոր,
Կը բանամ թեւերն հեւոտ անուրջիս·
Գուցէ անհունին խորհուրդը անդորր
Արեւին մէջէն քացուի հոգիիս...

... Կեանքը մըշուշն է այգուն հեռաւոր,
Անուրջը՝ լոյսն է շառ-շողով ծածուկ·
Կը զգա՛ս էովին, բայց աչքդ է անզօր,
Պատրանքի լոյսն է մօտիրդ՝ տամուկ...

Շողերուն դիմաց այգուն հեռաւոր,
Ի զո՛ւր կը բանամ թեւերն անուրջիս·
Կեանքը մըշուշն է՝ կոյր ու բրոնաւոր,
Որուն մէջ հազիւ շուրջդ կը տեսնես...

ՎԱՀՐԱՄ ՊԱՊՈՒԽԵԱՆ

ԱՆՅՈՅՍ ԳԱՐՈՒՆ

Բորբ ծաղկումին երիտասարդ այս արեւով
Քեզի հասնիլ արդ կը ձգտիմ սիրտս գինով·
Քեզի հասնիլ զերդ լուսայեղ գարուններուն:

Քեզի հասնիլ զերդ աղբիւրի մը բիւրեղին,
Քեզի գրկել կարօտին պէս մութ բաղեղին
Որ ծառին մէջ կը զգայ վերելքն աւիշներուն·

Քեզի խրմել ինչպէս բաժակ մը գինիի,
Ու դեռ այրի՛լ ջահին բոցէն որ կը մարի
Այս փոքրորկոտ սպասումին մէջ՝ նըւաղուն...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ